

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի: Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են մի այն խմբագրատան մէջ: Մեր հասցեն. Тифлисъ. Редація «Мшакъ». կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10-2 ժամ (բացի կիրակի և սուր օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեղուով:

Յայտարարութիւններ համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ՍՈՒՍՊԻԿԱՅ 1890 ԹԻՍՎԱՆԻՆ

ՄՇԱԿ

ԳՐԱԿԱՆՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱՎԱՆ ԼՐԱԿԻՐ

Կը հրատարակի Թիֆլիսում, նոյն գիրքով և նոյն պրոպրիետարով: Մեր ստանում ենք սեփական Հենդ-Բուքսեր: ՄՇԱԿԻ տարեկան գինը 10 ռուբլի է, միջ ամսականը 6 ռուբլի: Գրվել ՄՇԱԿԻՆ կարելի է ԽՊԱՍՏՊՈՍՆԵՐ (Բարձրագույն և Բարձրագույն փողոցների անկիւնում, Թամարիայի տանը): Կայտարարում ուրիշ բարձրագույն ՄՇԱԿԻՆ գրվելու համար պէտք է գիտնի հետևեալ հասցէով: ТИФЛИСЪ, Редація газеты «МШАКЪ», իսկ արտատպանութիւնը. Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

ԲՈՎԱՆՊԱԿՈՒԹԻՒՆ

Բրազիլիայի դրութիւնը. — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Զիզիլիական կրթութիւն. Նամակ խմբագրին, Ներքին լուրեր.— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Էրզրումի գրողական կենտրոնը, Նամակ Թիբր-քիայից. Արտաքին լուրեր.— ՀԵՆՈՒԳԻՆԵՐ.— ԲՈՐՍԱ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— ԲՈՒՍՏԱՐԱԿԱՆ. Նամակներ թիբրքաց Հայաստանից.

ԲՐԱՅԻՆԱՅԻ ԳՐՈՒԹԻՒՆԸ

Կարգադրվ հետագիւրը Բրազիլիայի յեղափոխութեան մասին, որի ժամանակ ժողովուրդը միացած էր հետ շնչալքու միապետութիւնը և հրատարակեց հանրապետութիւն, մեր ընթացողներից շատերը զուգէ այնքան ծանօթ չեն Բրազիլիայի դրութեան և պատմութեան հետ, ուստի մենք պարտաւորութիւն ենք համարում կարճատև կերպով ծանօթացնել նրանց այդ երկրի անցեալի և ներկայի հետ: Բրազիլիան երկիրը գտնվում է հարաւային Ամերիկայում, շրջապատված Արգենտինայի, Ուրուգուայի, Պարագուայի, Բոլիւիայի, Պերուի և Էկուադորի հանրապետութիւններով: Մինչև այսօր Բրազիլիան միակ միապետութիւն էր ամբողջ Ամերիկայում, մինչև իսկ ամբողջ երկիրը (թէ

հիւսիսային և թէ հարաւային Ամերիկան) հանրապետութիւններից է բաղկացած: Բրազիլիայի մայրաքաղաքը Րիօ-դե-Յանէյրօ է: Երկիրը աճապակա տարածութիւն ունի, նա հաւասար է 147,624 քառակուսի մղնի: Երկրի արեւելեան սահմանը կազմում է Ուլիսիանոս, որի արեւելի տարածութիւնը 1000 մղնի է հաւասար: Ամերիկայի դեւտից յետոյ, պորտուգալացի, Պեդրօ Ալփարէց դե-Վաբրալի առաջնորդութեամբ գտան Բրազիլիան և նուաձեցին այդ երկիրը Պորտուգալիայի համար: Այն օրակէջ Բրազիլիան դարձաւ Պորտուգալիայի մի գաղութանութիւն: Երբ պորտուգալացիք կան այդ երկիրը, նա բազմազան էր կարծրատնային բազմաթիւ ցեղերով, որոնցից մի քանիսը մարդակերներ էին: Կարմրամորթ հնդկներն այժմ թուով մի միլիօնի չափ են: Բրազիլիայում, իսկ այդ երկրի բնակիչների ընդհանուր թիւը հասնում է այժմ 10 միլիօնի, որոնք բաղկացած են պորտուգալացիներից, սպանիացիներից և նրանց սերունդներից, նեգրներից, նմանապէս այլ և այլ խառնուրդներից սևամորթների կարմրամորթների և եւրօպացիների մէջ: Կան Բրազիլիայում և գերմանացիք, շվեյցարացիք, անգլիացիք: Կարմրամորթ բնիկները մինչև այժմ անընդունակ կան որ և է քաղաքակրթութեան ներթափանցելու: Նրանց վրա իշխում է Արաղի դաշտի մէջ նստող Մուսա ազա էլ-Աղա սին (ցեղապետ): Բացի նախկին, ասում են թէ շողիկ են դրանք քարածուխ, և չը դիտել թէ արչափ կարելի է հաւատալ նոյն իսկ աղամանդի հանք: Զը նայելով այդ ուղորին, երկրի ամեն կողմ գտնվում են ջրեր, երկաթի հանքեր, ծծումբ... Գեւե ևս կոյս է այս երկիրը և Ատտուած դիտել թէ որ օտարազգիներ այլուր գալ մտնելու նրա խորքը, շահու և մնա վրա ծիծաղելու, որ մինչև այժմ չենք կարողացել օգուտ քաղել նրանից: Պիտի գիտնաս, որ ոչ մի տեղ քերդը այնչափ շատ է, որքան Վասպուրականում, Աղերտում, Տիգրանակերտում և Մուշում, այս տեղերից իւրաքանչիւրը ունի իր աւազակապետը: Վասպուրականում, Միլերտի կողմերը և Մուշի մէջ բանակել նստել են միմեանց հետ յաճախ կուտղ քերդական հետևեալ ցեղերը. Հասնացիք, խառնացիք, հայտարանցիք, իրօցիք, շատցիք, խուրթանցիք, թուրքացիք, ղէլիմահաճացիք, թարեհացիք, շաբեհացիք, ըլժանցիք, թուրքացիք, շխիսաանցիք, թէմրանցիք, արեւիք կա արեւիք (արեւորդը), ալանցիք, մըդղացիք, ոստանցիք, սուրինցիք, փիլվանցիք, Վլաւցիք, Վիբանցիք և այլն և այլն, դեռ ևս բազմաթիւ ցեղեր, որոնցով լցված են չորս կողմը և որոնցից մեծ մասը պարզ են աւազակութեամբ և իւրաքանչիւր ցեղը ունի իր ցեղապետը:

րանց պարպում են միմայն որսորդութեամբ և մանր առևտրով բայց կատարելապէս անընդունակ են յայտնվում երկրագործութեամբ պարպելու: Նրանց լեզուն ազգատ է և զարգացման անընդունակ, քանի որ այդ լեզուով կարելի է միայն արտաքին աշխարհի առարկաները արտայայտել և երբեք չէ կարելի վերացական որ և է զարգաւար արտայայտել: Կարերի ընթացքում, այն է մինչև 1822 թիւը Բրազիլիան Պորտուգալիայի գաղութանութիւն էր կազմում: Մայր-երկիրը աշխատում էր ձնել և հլու հպատակութեան մէջ պահել երկիրը, բաժանելով վարչական տեղերը միմայն բնիկ պորտուգալացիներին, հովանաւորում էր ստորկուծիւնը և ամեն միջոց դրօժ էր դնում որ նրկըր անհատական, ինքնուրոյն կերպով չը զարգանայ, ամեն ջանք դրօժ դնելով որքան կարելի է շատ հարստահարել երկիրը ու երկրի հարստութիւնները պետական զանձարանի օգտին: Կարերի ընթացքում պատամբութիւնների բազմաթիւ փորձեր կան Պորտուգալիայից բաժանվելու նպատակով, բայց այդ յեղափոխութիւնները անաջող վախճան էին ունենում: Վերջապէս Պորտուգալիայի Յովհանն VI Թագաւորի որդին, Գոն-Պեդրօ, որ փոխաբայ էր Բրազիլիայում, ստիպվեց կրկին յեղափոխութիւնների պատճառով մայիսի 13-ին 1822 թիւն բաժանվել մայր-երկրից և Պեդրօ I-ի անունով հռչակեց իրան անկախ Բրազիլիայի սահմանադրական կայսր Բրազիլիային սովեց սահմանադրութիւն, հաստատվեցան պատգամաւորների սպասին ժողովուրդի անստիպ, որովք մտնում էր կատարելապէս պատգամաւորների անհատական պատգամաւորների ժողովի առջև: Բայց դեռ երկար ժամանակ շարունակվեցան անկարգութիւններ ու խռովութիւններ երկրի մէջ: Անդադար այս կամ այն նահանգի մէջ լինում էին այլ և այլ պատամբութիւններ, մասնաւոր ճորտերի պատամբութիւններ, անդադար փոփոխվում էին միմիտորութիւններ, և Բրազիլիան ստիպված էր, բացի սրանից, անընդհատաբար պատերազմներ մղել իրան անհանգիստ անող հարևան հանրապետութիւնների դէմ: Ստրկութիւնը Բրազիլիայում վերացվեց

միմայն մի քանի տարի առաջ Բրազիլիայի ներկայ կայսրի ժամանակ: Բրազիլիան անկախ դառնալով անհաւատալի արագ կերպով առաջ դնաց նիւթական և մուսուր զարգացման ճանապարհով: Երկրի առևտուրը, արդիւնագործութիւնը և երկրագործութիւնը սկսեցին ծաղկել, և ներկայ թէի Պարիզի համալսարանից ցուցահանդէսի մէջ Բրազիլիան ամբողջ աշխարհի առջև հանդիսացաւ որպէս երկրագնդի ամենաառաջադէմ երկիրներից մինը: Այժմ Բրազիլիան ունի բազմաթիւ դրժարաններ և հանքագործարաններ, բազմաթիւ բանկային և առևտրական տներ և ընդարձակ վաճառականութիւն: Երկրում հինվեցան մի քանի համալսարաններ, բազմաթիւ զարոյցներ, մուղէուներ և զբոսարաններ: Միայն մի կէտ կայ, որը սուուէր էր դըրում Բրազիլիայի մուսուր և հոգևոր, ուրեմն և քաղաքական կենքի անարգել զարգացման վրա. դա կաթովիկ եկեղեցու անհամբողջ օգին էր: Բրազիլիայի բնակիչների մեծամասնութիւնը կաթովիկ դաւանութեան պատկանելով, եղուիտների ազդեցութիւնը երկրի մէջ չափից դուրս մեծ է եղել միշտ այդ պետութեան մէջ: Այն աստիճան անհամբողջ էր այդ ոգին, որ երկրի սահմանադրական օրէնքների մի յօդուածի զօրութեամբ պատգամաւորների ժողովի անպիտ կարող էր ընտրվել միմայն կաթովիկ դաւանութեան պատկանողը: Այժմ Բրազիլիան հանրապետութիւն դառնալով, կազմում է բրազիլիական միացեալ-նահանգները: Խրաքանչիւր նահանգը իրանց ներկայացուցիչներ ունի երկրի ընդհանուր պարլամենտի մէջ: Բրազիլիան շատ հարուստ երկիր է կենդանական, բուսական և մանաւանդ հանքային բերքերով: Մանաւանդ հռչակված են Բրազիլիայի աղամանդները: Շատ տեղերում երկիրը դեռևս հետազօտված էլ է: Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՅԻԶԻԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆ

Կարծիք չը կայ, որ մարդու կանօնաւոր դար-

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՆԱՍԱԿՆԵՐ ԹԻՐԻՔԱՅ ՀԱՅԱՍՏԱՆԻՅ

XI 188... հոկտեմբերի 25, Վան:

Բարեկամ, Անցեալ նամակումս խօսելով այս երկրի հարստութիւնները վրա, մտաբայ քեզ փոքր ինչ խօսելու հանքաքանական մասի վրա: Նախ մի երկու խօսք այդ մասին: Երկի վերադարձայ Բերկերից, ուր դնացել էի տեսնելու Շէյխ իրադուլաշի աւերած նաւթի հանքը, որին գտել է Առաւելդեանց անունով մի վանեցի: Հանքի գտնված տեղը մի ձորակ է, Գուրծօթ գիւղից ոչ շատ հեռու՝ Բէլ-Բարմազ կոչուող լեռների մէջ: Պատմում են թէ յաջողված էր նաւթը հանել իսկ, փորելով ջրհորների նման հորեր, մինչև այժմ էլ կարելի է տեսնել այդտեղ վտակներ, որոնց ջրի երեսից ձորում է սև նաւթը, բայց ի հարկէ դրանով չէ կարելի հաստատել թէ նաւթ կայ այդտեղ, այլ այն ընկերութեան անդամներով որին կազմել էր ինչեալ անվեր, ուր այժմ իսկ աշխատում է կաղանկերպ վեր սակայն երկրի այս անապատով վիճակը երկնտեցնում է նրանց. մանաւանդ որ Բերկերի մէջ վխտում են քերդերի բազմաթիւ ցեղեր՝ ո-

րանց վրա իշխում է Արաղի դաշտի մէջ նստող Մուսա ազա էլ-Աղա սին (ցեղապետ): Բացի նախկին, ասում են թէ շողիկ են դրանք քարածուխ, և չը դիտել թէ արչափ կարելի է հաւատալ նոյն իսկ աղամանդի հանք: Զը նայելով այդ ուղորին, երկրի ամեն կողմ գտնվում են ջրեր, երկաթի հանքեր, ծծումբ... Գեւե ևս կոյս է այս երկիրը և Ատտուած դիտել թէ որ օտարազգիներ այլուր գալ մտնելու նրա խորքը, շահու և մնա վրա ծիծաղելու, որ մինչև այժմ չենք կարողացել օգուտ քաղել նրանից: Պիտի գիտնաս, որ ոչ մի տեղ քերդը այնչափ շատ է, որքան Վասպուրականում, Աղերտում, Տիգրանակերտում և Մուշում, այս տեղերից իւրաքանչիւրը ունի իր աւազակապետը: Վասպուրականում, Միլերտի կողմերը և Մուշի մէջ բանակել նստել են միմեանց հետ յաճախ կուտղ քերդական հետևեալ ցեղերը. Հասնացիք, խառնացիք, հայտարանցիք, իրօցիք, շատցիք, խուրթանցիք, թուրքացիք, ղէլիմահաճացիք, թարեհացիք, շաբեհացիք, ըլժանցիք, թուրքացիք, շխիսաանցիք, թէմրանցիք, արեւիք կա արեւիք (արեւորդը), ալանցիք, մըդղացիք, ոստանցիք, սուրինցիք, փիլվանցիք, Վլաւցիք, Վիբանցիք և այլն և այլն, դեռ ևս բազմաթիւ ցեղեր, որոնցով լցված են չորս կողմը և որոնցից մեծ մասը պարզ են աւազակութեամբ և իւրաքանչիւր ցեղը ունի իր ցեղապետը:

Այս ցեղերի մի քանիսների մասին աւելորդ չէ մի քանի տեղեկութիւններ, հաղորդելու: Իդօլի աշիրէթը (ցեղը) առանձին սահման ունեն, բաւական բազմամարդ են նրանց գիւղերը, մեծ մասամբ բնակվում են Փալուսի կողմերը. անկախ ազգ են և հարկ էլ չեն տալիս, դրանց մեծ մասը զինուորաված են: Շատ էցիբե ա-մեն կողմ բանել են, հազար հինգ հարիւր աւազակ կարող են ունենալ: Խաւանցիք, որոնցից շատերը զենք են կրում և սպարում են աւազակութեամբ՝ անմշակ թողնելով իրանց բունած ընդարձակ արգաւանդ հողերը: Հաւանցիք բունում են Միլիան լեռան ստորոտը. այդ լեռան խոռոչները և այրերը նրանց պատարան են, Մանազկեբուրի քուն կոչուող լեռնադաշտը իրանց աւազակութեան սպարաբեքը, Արձկէն և Սալթը իրանց ձրիապէս պարուստ մատակարարողը: Զէլ-Լաւցիք բուն են Բայազետի և Ալաշկերտի բարձր դրբերը, կատաղի արկուսբաբու մի ցեղ է և առանց մորթելու չէ կողոպտում: Հետաքրքիր են եղիղիները, կլլաշները, ուստի և պիտի ներես, որ փօքը ինչ երկար խօսել այդ տարբերակ քրդական ցեղերի վրա: Եղիղիները բնակվում են աւելի Արձակ, Աղերտի և Բայազետի կողմերը: 1820 թականներին ունէին նրանք առանձին իշխանութիւն Ռնտվանի մէջ, ուր նստում էր նրանց Միլըքը իշխանը և օրին Օսմանեան կառավարութիւնից ու-

դարկված մէկը նուաձեղով՝ բունց և տարու կ. Պոլիս, յետոյ երբ կառավարութիւնը տեսաւ թէ այդ ցեղը աւելի քրիտոստեայ է քան մասնատական, մեծ հալածանք հանց նրա դէմ, անհետացրեց Միլըքը իշխանին և ցրվեց այդ ցեղը զանազան կողմերում: Գրանով չաջողեց նա ոչնչացնել եղիղիների զգուածը դէպի մասնատականները, այնպէս որ, մի եղիղի եթէ աջողի սպանել մի մասնատական՝ համարվում է իրանց մէջ մեծ գործ, արքայութիւն է դնալ կարծում այն եղիղին, որը կը մորթէ մի անմտական մուլայ և կը խմէ նրա արիւնը.—այդ աստիճանի ստեղծութիւն ունեն նրանք դէպի մասնատականները: Նրանց կրօնը, նրանց սովորութիւնները բոլորովին հակառակ են միւս քերդերի սովորութիւններին և կրօններին: Նրանք հաւատում են Գրիտոստիս՝ որին Վասաը նուրանի են կոչում, ունեն կապալայ կոչվող կրօնատորներ, որոնք հագնվում են ձիւտ մեր անապատական վարդապետների նման. ունեն անձայն պատարազ, սակայն ունեն նաև հետաքրքիր նախապաշարումներ: Հաւատալով, որ ստատանները անկեալ հրեշտակներ են և ամենագութն Ատտուած պիտի մի ժամանակ ներկուլ նրանց, վերածէ իրանց նախկին վիճակի մէջ՝ չեն նստում ստատանային, այլ յարգում են նրան՝ այնպէս, ինչպէս որ մենք կը ցաւենք և չենք հարուստի մի յանցաւորի, որը երկար ժամանակ կրում է իր յանցանքների պատիժը: Եւ որովհետև ստատանս եղիղիների

զացման համար, հարկաւոր է մտաւոր կրթութիւնը միացնել ֆիզիկականի հետ: Միայն առողջ, ուժեղ, առողջ և զիւրաշարժ մարմնի մէջ կարող է ապրել առողջ, համարձակ, անվհեր և հաստատուն հոգի:

Նստողական կեանքը և մտաւորական պարսպաճեղքը սպառնացնում և աւերում են ֆիզիկական ուժեղը, որոնց զորացնելու համար հարկաւոր է շարժումը, կամ մարմնամարզական վարժմունքներ:

Այս դարի սկզբին արդէն Գերմանիայի մէջ լսանք և Շվեդիայի մէջ լինող առաջարկում էին կրթութիւնը հիմնել մարդու ֆիզիկական և հոգեւոր ուժերի միաւորութեան վրա: Լինող ուսումնասիրել է մարմնամարզական շարժումների ազդեցութիւնը միանուններին, ջգերին, զլխային և ողնաշարի ուղեղի, սրտի բարխաման և արիւնի շրջանի վրա և այդ ի նկատի առնելով նա ստեղծել է մանկավարժական և բժշկական մարմնամարզութիւն: առաջինը գործածվում է մանկավարժական նպատակով և նրա ազդեցութիւնը ընդհանուր է, երկրորդը գործածվում է բժշկական նպատակով և ունի տեղական ազդեցութիւն:

Մարմնամարզութիւնը տալիս է միջոց ֆիզիկական ուժերի զարգացումը հասարակչական մտաւոր զարգացման հետ և ուղղելով մարդու մարմնի կազմակերպումը, դարձնում է նրան շնորհալի, ազատ, արագաշարժ, առողջ, ուժեղ, ինքնավստահ և աներկալ: Քանի որ մարդը աւելի տիրապետում է իր ֆիզիկական մարմնի վրա, այսինքն քանի նա հետաւում է հպատակեցնում է մարմնի մասերի շարժումը իր կամքին, այնքան աւելի վստահ է լինում իր գործերի մէջ: Այս հանգամանքը պարզ երևում է մինչև անդամ մարդու ամբողջ արտաքին կերպարանքի վրա, նրա ձևերի և քայլածքի վրա:

Եզերը, Յիւրիսի ֆիզիկաօթիկութեան և մանկավարժութեան նախնին պրոֆէսորը, ասում է թէ մարմնամարզութիւնը կը վերաբերի ոչ թէ միայն հայրենեաց, որի համար պատրաստում է քաջասիրտ պաշտպաններ, այլ և ազգի ընդհանուր կրթութեան, տարածելով իր ազդեցութիւնը նոյնքան առողջութեան վրա, որը նա գործադրում է և ուսումնասիրում է մանկավարժական հաստատուն դարձնելով նրան, և մտքի վրա, որը ընդարձակվում է համաձայն մարդու կրթելի լայնանալով...

Ֆիզիկայ ժամանակիս ամբողջ արևմտեան Եւրոպայում չը կայ ուսումնասիրում, որի մէջ մարմնամարզութիւնը չուսուցանվէր միև ուսման առարկաների հետ: Ֆրանսիայում, իբրև միջոց մտաւոր յօշոտման համար, յօշոտված են զպրօցական վաշտեր, որանց մէջ սովորեցնում են երկրաբաններին զինուորական վարժութիւններ, որոնք ծառայում են պատանիներին որպէս մարմնամարզութիւն:

Մտտ օրերուսն Ռուսաստանի բոլոր քաղաքային ուսումնարաններին մէջ ևս մարմնամարզութեան կրթութիւնը պարտադիր արեցին: Դրա

համար անցնալ տարի կազմված էր ժողովրդական լուսաւորութեան, զինուորական և ներքին գործերի միջնատրոփութիւններից ներկայացուցիչների յանձնաժողով, որը մշակել էր ծրարիւր Համաձայն այդ ծրարիւր մարմնամարզական դրաւորումների համար միջնատրոփ ուսումնարաններին մէջ նշանակվում է շարժական երկու դաս, իսկ ստորին կարգի ուսումնարաններին մէջ երեք դաս: Այդ ժամանակամիջոցը պէտք է բաժանվի այնպէս, որ դրա մեծ մասը գործադրվի ճշգրտութեամբ մարմնամարզական դրաւորումների վրա, իսկ մնացածը զինուորական պարսպաճեղքներին: Չինուորական դրաւորումների նպատակը այն է, որ աշակերտները բարոյագէտ կրթվին, սովորեն կարգ պահել ուսումնարանների մէջ և զլուսաւորագէտ պարտասովին զինուորական ծառայութեան, որը այժմ համահասարակ պարտաւորական է ամեն զասակարգի և աստիճանի մարդկանց:

Յանկայի է, որ մեր աղգային դարձողների մէջ ևս կատարեալ ուշադրութիւն դարձնելի ֆիզիկական կրթութեան վրա և մարմնամարզութիւնը ընդունվէր որպէս պարտադիր առարկայ, որպէս զի ապագայում մեր մանուկ սերունդը չը մեղադրէ իր դաստիարակներին՝ զրկված լինելով ֆիզիկական կրթութիւնից, որը անհրաժեշտ է իւրաքանչիւր պատանու. առողջութեան համար:

ՆԱՄՍԱԿ ԽՄԲԱՐՈՒՆ

Նոյեմբերի 10-ին

Նորերումս Բաղուի մէջ 125 ընտանիք և բըծիշ Տէր-Յանեանց իրանց մէջ կայացրին մի պայմանագիր, որի տպած մի պատճէնը առիթ ունեցայ տեսնելու: Պայմանագիրը բաժանված է 16 յօդուածների վրա, որոնք պարզում են իւրաքանչիւր ընտանիքի պարտքը և իրաւունքները և բժշկի պարտականութիւնը՝ հարկաւոր միջոցներ, 125 ընտանիքի մէջ պատահած հիւանդներին այցելելու: Պայմանագրից երևում է, որ 125 ընտանիքից 100-ը պիտի վճարեն իրանց ընտանեկան բժշկին տարեկան 1,500 ռուբլի, իսկ չքաւոր դասին պատկանող 25 ընտանիքի հիւանդներին այցելութեամբ բժշկը պարտաւոր է ձեր կատարել: Բժիշկը պիտի ամիսը մի անգամ այցելէ իւրաքանչիւր ընտանիք, ինքը վճարելով և կառքի վարձը, իսկ միև հիւանդ եղած դէպքում այցելութիւնների կառքի վարձը հիւանդ ընտանիքի վրա է: Համախորհուրդի (կոնսիլիումի) համար հրաւիրած բժշկին հիւանդատեղը պիտի վճարէ: Իր հիւանդութեան ժամանակ բժիշկը պարտաւորվում է իր հաշուով հրաւիրել մի անգամ բժիշկ, 125 ընտանիքի բժշկի պաշտօնը կատարելու համար, մի և նոյն պայմանագրով Տեղական զեղարմատ Ելիսի խոստանում է փող վճարող 100 ընտանիքներին հիւանդների համար զեղարմ գնելից 20% զիջողութիւն անել, իսկ 25 անվարձ քաւոր ընտանիքներին հիւանդների

բանց հետ և չեն առնում նրանցից ոչինչ: Ունեն կրօնագրող Հալբոլ քաղաքում, ունեն մասնաւոր շէյխեր ամուսնացած, իսկ իրանք առհասարակ մի կին են ունենում և այդ կանայք ազատ խօսում, նստում և ուտում են առանց փախելու մարդկաներից: Ունովանում մինչև այժմ ամեն ուր կարող է տեսնել նրանց Միւրղը իշխանի ազգական ամբողջ և կարող է լսել նրա պատմութիւնը:

Ազգաբանակութիւններից բացի, վասպուրականի մէջ կան ասորիներ, որոնք բռնել են Երվանդի մի քանի զիւղեր և անմատչելի լեռնադաշտեր նրանց կրօնագրող կոչվում է Մարջի-մն, որի համար ասում են թէ՛ կրէք միս չէ ուտում:

Ասորիները բաժանվում են դանդաղ խիտ անկրթ, բոլորովին անզն, անզբաղէտ ցեղերի, սաստիկ կեղտոտ են պահում թէ՛ իրանց անձը թէ՛ բնակութիւնները, սակայն հայերի հետ բա-

համար տարեկան 200 ռուբլի արժողութեամբ ձեր զեղեր մատակարարել:

Համակրելով և օգտուել համարելով այդպիսի մի ընկերակցական գործունէութիւնը, չեն կարող մատնանել չանել և այն պակասութիւնների վրա, որոնք պայմանագրի ճիշդ կատարման համար արգելքներ յարուցանելով, վերջի վերջոյ դժգոհութիւնների պատճառ կարող են լինել: Մենք ֆիզիկայէս անկարելի և անիրագործելի ենք համարում պայմանագրի մի քանի կետերը: Հնարաւոր է արդեօք մի բժշկի կատարել 125 ընտանիք, եթէ իւրաքանչիւր ընտանիքի մէջ minimum 5 հոգի ընդունենք. նմանպէս եթէ հիւանդներին թիւը 40% ընդունենք, ուրեմն օրը 25 հիւանդ մարդկանց կարող է այցելել մի բըծիշ և կատարեալ կերպով վերահսկողութիւն ունենալ: Վեցերորդ յօդուածի համաձայն արական սեռին պատկանող թիւն հիւանդները պիտի երթնեն բժշկի բուժարանը՝ բժշկական խորհուրդը ստանալու համար: Բայց այդ կարգին պատկանող հիւանդները շատ քիչ կը լինեն, միև նոյն ժամանակ թիւն կարծեցեալ մանուկ հիւանդներին մեր կարծիքով, բուժարան ամեն կանօրու և միասակար է, մանաւանդ կոկորդի, կամ թոքերի հիւանդութեան զէպերում: Եթէ աւելացնենք, որ մի օր և է էպիդեմիայի ժամանակ զերդաստանների մէջ հիւանդներին թիւը պիտի աւելանայ, այն ժամանակ այդպիսի պայմանագրի յօդուածները պիտի անիրագործելի մընան: Բժիշկը չէ կարող 24 ժամ հիւանդներով պարսպել, նրան հարկաւոր է հանգստութիւն, ճաշելու ժամանակ և գոնէ օրը երեք ժամ բժշկական լիարժեքի և ամառիցը իր ուսումնասիրութեան համար: Մեր կարծիքով, մի բժիշկ 50 գերդաստանից աւելի կտուավարել անկարող է:

Իսկ ինչ կը վերաբերի բժշկի աշխատութեան վարձի քանակութեանը, մեր կարծիքով, 125 ընտանիքը 1,500 ռուբլի, կամ իւրաքանչիւր ընտանիք 12 ռուբլի տարեկան վարձը չէ գնահատում բժշկի տաժանագիր աշխատանքը, և զա աւելի է կսպարձաւ առաջի քան թէ աշխատանքի գնահատութիւնը: Յամենայն դէպս մենք ուրախ կը լինենք, եթէ մի այդպիսի պայման՝ բժշկի և հասարակութեան մե՞ծ հոսանքով, քանի որ նա նպատակաւոր է հասարակութեան համար: Բայց իրագործելի է արդեօք:

Բժիշկ ***

ՆՅՐԻՆ ԼՈՒՐՆՐ

Ինչպէս յայտնի է թեմական առաջնորդ Արիստակէս եպիսկոպոս Սեղրական թողնում է թեմը և ուղևորվում է Եմիածին: Քիֆիսի հայոց հասարակութիւնը իմանալով որ սրբազանը բաւական տկար է և ինքիժական միջոց չունի բըծիշկեան, քանի որ նա առաջնորդարանից դուրս է գալիս բոլորովին աղքատ, վճարել է մի փոքրիկ գումար հաւաքել նրա համար, որպէս զի նա կարողանայ գոնէ հոգ տանել իր առողջու-

թեան մասին: Այդ նպատակով քաղաքիս հայերի մի քանի շրջաններում սկսեցին փող ժողովել և մի շաբաթվայ ընթացքում հաւաքվեց արդէն 5000 ռուբլու գումար:

Լսում ենք որ Արիստակէս եպիսկոպոսի Քիֆիսից ճանապարհ դնելու ժամանակ զիտաւորութիւն կայ ճակերոյթ առ սրբազանին:

Պ. Վ. Վազարի Ռեզայի լիկեյներին գործարանի ներկայացուցիչը Քիֆիսի ՍՈՒՄ, տեղեկանալով, որ վճարված է կովկասեան Յուսանդուրի հրապարակ քաղաքային այգի դարձնելու, ընծայեց իր անաղին և զեղեցիկ փայտեայ վիտրինը (պահարանը), որը զրկած էր ցուցասանդուսում, այսպէս այգու բուժեպին:

ԲԱՅՈՒՄՈՒՄ քաղաքի է մի նոր գրավածառանց և լրագրական գործակալութիւն Յիշեալ հաստատութեան ահըը, պ. Նիկողաճէ, ընդունում է իր գործակալութեան մէջ բոլոր թէ Ռուսաստանի և թէ արտասահմանի հաստարակութիւններին համար բաժանորդագրութիւն՝ խմբագրական գներով: Ի միջի այլոց յիշեալ գործակալութեան մէջ ընդունվում է և ՎՇակի՝ բաժանորդագրութիւնը:

Մեզ գրում են որ Զանգեզուրի գաւառի զինուորակցական ատեանը անցեալ ամիս 15-ից սկսել է իր գործունէութիւնը և հրաւիրել է բոլոր շրջակայ հայարնակ և մարտական զիւղերից զինուորացուներին զէպի վիճակահանութիւնը: Նոյն ամիս 15-ին կատարվեց առաջին վիճակահանութիւնը Գարաբլիտում, 25-ին Արցախի գումար և ապա ատեանը վերջացնելով իր գործը այդ կրկու զիւղերում, վերադարձել է նոյեմբերի 5-ին Գորիս, որտեղ և սկսել է նկատելի վիճակահանութեան Գորիսի և շրջակայ զիւղերի զինուորացու երիտասարդներին: Ամբողջ գաւառը, ինչպէս լսել է թղթակցիցը, պէտք է 84 զինուոր տայ:

ԳՕՐԻՍԻՑ մեզ գրում են որ նոյեմբերի 7-ին այդտեղ և շրջակայքում ձին սկսեց գալ և ծածկեց զետեղը ճաւորը արշին խորութեան սպիտակ սաւանով: Առաւտները և զիւղերը բաւական ցուրտ է լինում:

Նոյեմբերի 12-ին Քիֆիսի ՍՈՒՄ ձինսխառն անձրև եկաւ. ձինը անմիջապէս հալվում էր:

Թիւրքաց Հայաստանի Տիգրանակերտ քաղաքից Արտասահմանի հայոց լրագրներին ի միջի այլոց գրում են ՎՄախա ամսին մէջ 4 Հայեր մահմտականութիւն ընդունեցին Տիգրանակերտի մէջ մին 25 տարեկան Յակոբ անուն անձն էր, երկրորդը Մարգարիտ 18 տարեկան պատանի մը, երրորդը Ալիյի երկու եղբայրներ, մեծը 12, փոքը 10 տարեկան: Չորսն ալ անմիջապէս թղթատուեցան ըստ թըքոց սովորութեան:

կարծիքով գիտնի տակը բանտարկված է, ուստի չեն թըքում զեանի և՛ մինչև անգամ սաստիկ բարկանում են երբ մէկը նշողովում է սաստանային կամ թըքում է գետնին: Մի ուրիշ անբաջատրելի նախապաշարում ևս պատմեմ ընդ:

Եթէ մի եղիդի առջևը քաշես մի դի՞ նա այդ զծից չի անցնիլ. իսկ եթէ շուրջը քաշես, նա կը մնայ կանգնած և մինչև իր աղաչանքներով զի՞ծը ջնջել չը տայ՝ նա այդ շրջանից դուրս չի գնայ, չի անցնիլ զծի վրայից:

Խում են գինի և եթէ իրանց երկու ձեռքով բռնած գաւաթից մի կաթիլ գետնին թափվի՝ պարտաւոր են լքել և չը թողնել որ մնայ:

Առատեանները աթթում են նրանք ճիշտ արեւապաշտներն պէս: Միացնում են երկու ձեռքերը, թողնում են որ արեւ իրանց խաչածն զրած ըմբամտերի վրա գրանէ և այդ համբուրելով եւեք անգամ, գնում են ճակատներին:

Երգում են «Խասը նուրանի», և «Մէլէքը զատուի» (անկեալ հրեշտակի), նաև մի ինչ որ «Սղէի» անուններով:

Առհասարակ մի խաղաղ, երկրագործութեամբ զբաղող, աւագակութեան և անբարոյականութեան խիտ հակառակ, սակայն ծածուկ՝ գողութեան բոլորովին վարժված, քրիստոնէականներին սիրող և նրանց հետ սերտ բարեկամութիւն հաստատող մի ազգ են կազմում եղիդները, սաստիկ ատում են մահմտականներին, չեն ուտում նը-

րեկամ են և իրանց եկեղեցու կառավարութիւնը ենթարկված է կ. Պալոի հայ պատրիարքի իշխանութեան, թէև առանձին պատրիարք ևս ունեն կ. Պալոս: Նրանց քանանները կոչվում են «խասա» և տիրացուները «խուրի»:

Իսկ տաճիկները մեծ մասամբ բնակվում են քաղաքներում և նրանց հասարակ ժողովրդից այն մասը, որը բնակվում է հայոց թաղերի մէջ, հայերի հետ շատ լաւ յարաբերութիւններին մէջ է գտնվում, լաւ խօսում են հայերէն, շատ ուսելիքի և գործիքների տաճիկէն անուն իսկ չը գիտեն և հայերէն են գործածում:

Քաղաքի մէջ տաճիկները զբաղվում են պարտիզպանութեամբ, վաճառականութեամբ և արհեստներով, մեծ մասն էլ ապրում է իրանց ունեցած հողերով, որոնք մշակում են հայ մարտբան և բը Վանի մէջ նրանք տեղ են բռնել աւելի Շամիրամ կոչվող թաղում, որտեղից և անցնում է Շամիրամի առուակը:

Մրանք հազնում են քրդական հագուստներ. լայն շալվար, կարճ բաճկոն և վրան մի երկար կապույտ կամ սև մահուդի վերարկու, հասարակ կոչիկներ կարգած վանի կաշից, զլուրը զրած մի երկար դիւսկիւլով (թիւերի փունջ) ֆես և նրա վրա փաթաթած մէկ և կամ երկու հատ զոյնզոյն «Եսաղմա»-ներ (զուռաւոր թռչկակ), իսկ մէջքին փաթաթած մի լայն շալ: Հայերից շատերն ևս այդ տեսակ են հագնվում, սակայն

Մեզ տեղեկացնում են որ Երևանի նահանգապետ Պարտառնու մերջին ժամանակները յաճախ են քննվում հոգայտի հետաքրքրական դործերը որոնցից պարզ երևում է, թէ ինչպէս այդ նահանգում զանազան անձինք և տոհմեր, իրեն մուշտ աղտոտ են և կալուածատէրերը—տարիներ ընթացքում սեփականացրել են այս և այն գիւղացու, կամ այս և այն գիւղացուական հողերը: Ցանկալի է, որ այդ հարցերում արդարեւակուծեան շահերը արդար կերպով պաշտպանվեն կալուածատէրերի դէմ, և այդ գործում անկասկած մեծ օգնութիւն կարող են անել բարեխղճ և ուղղամտ փաստաբանները: Մենք ուրախ կը լինէինք, եթէ հողային վեճերը վերաբերեալ այս գործերը, որոնք քննվում են Երևանի նահանգապետի գատարանում, և որոնք կարող են պարզել մեր երկրի հողային խնդիրը, դատարանից մատուցել մէջ էլ անցնելին՝ ամենայն մանրամասնութեամբ:

Նոյեմբերի 10-ին ուրբաթ օր բաւական մեծ բազմութիւն էր հաւաքված թիֆլիսի օպերային թատրոնը, և այդ ոչ թէ Կլարմեն, օպերան տեսնելու, — այլ յատկապէս տեսնելու, թէ ինչպէս կը խաղայ երգչուհի Լատերեն Կարմինի դերը: Մեր հասարակութիւնը շատ կարմնեւոր է տեսել, և շատերը, ինչպէս Սիմոնով, Լասալ, Եօզեֆովիչ, Լեւառաովիչ այդ դերում դուրս գալով բաւական լաւ յիշողութիւններ են թողել իրանց խաղի մասին: Երգչուհի Լատերենը, որը այդպիսի դերերում, ինչպէս են Լեոնորայի, Բախիլի, Մարգարիտի, Արիպի դերերում կարողացել է գրաւել հասարակութեան ջերմ համակրութիւնը, տարաբաղաբար կարմնի դերում ոչ թէ միայն աջօրութիւն չունեցաւ, այլ նոյն իսկ թէ ցատկային թեան և թէ մինչև անգամ ծիծաղի առարկայ դարձաւ: Ներկայացման անաղարտմանը աւելի ոյժ տուց երգիչ Վլադիմիր—Յուդի դերում, — որ անշուշտ խաղով: Անհասկանալի է, թէ ինչպէս Լատերենի նման մի հասկացող երգչուհի իրան թող է տալիս դուրս գալու իրան անհամապատասխան դերերում կոտորելով իր անունը:

Արտասահմանի հայոց մի լրագրին Կ. Պոլսից գրում են. «Մուսա-պէյ մի շքեղ տուն վարձած է այժմ Վատարդի, ուր վաշայի կեանք կը վարէ. ունի իրեն անձնական ձիեր, թէև ընդհանրապէս կապքով կը պտտի: Եւսկայնները պտտած առեն իր ետնին մի քանի սպասուոր ունի, որոնք իր հովանոց, վերաբերու և այլն կը կրեն»:

Մեզ հաղորդում են որ թիֆլիսի Հաւաքար կոչված թաղում անուսուս մնացող երկխաների և անցք քաղաք հասակներին թիւը այնքան մեծ է, որ անհրաժեշտ պահանջ կայ, որ և միջոցով գէթ պարզ գրադրութիւն մատակարարել դրանց: Մինչև որ այդ բազմամարդ թաղում կը բացվեն զարոցներ, — որի մասին անհրաժեշտ է լրջօրէն հոգալ, — ցանկալի է, որ թիֆլիսի ինտելիգենտ երիտասարդները և օրիորդները որոնց մէջ պարտապէս լինելու է Լատերենի ներքին հողային այդ մտապնդած թաղում կիրակեաց զարոցներին միջոցով գրադրութիւն և տարրական ուսում տարածելու:

Կիրակի օրը, նոյեմբերի 12-ին, թիֆլիսում, սլաւախի շինութեան մէջ, տեղի ունեցաւ կուկապետ ցուցահանդիսի է կուսյօնի տնտէսի պարզ և բարձր ու թիւնը: Հանդիսին ներկայ էր մեծ բազմութիւն: Հանդիսը բաց արար իշխան կառավարչապետ Գոնդուլով: Կորսակով մի ճառով: Այդ ճառի մէջ իշխան կառավարչապետը ողջունելով ներկայ եղողներին, չնորհաւորեց Կովկասեան առաջին ցուցահանդիսի աջող վախճանը, ասելով, որ ցուցահանդիսի այդ աջողութիւնը լաւ գրաւական է երկրի տնտեսական զարգացման: Իշխան կառավարչապետից յետոյ է կապերտային յանձնաժողովի նախագահ Բարոն Նիկոլայի մի քանի խօսք ասեց է կապերտային կոմիտիայի գործնականութեան և չնորհած մեղադրելի ու գովասանական թերթերի մասին: Մտաւորապէս 1,000 պարզ և է արբւած, պարզները հետևեալ տեսակների են բաժանված. — ոսկէ մեդալներ, արծաթէ մեծ մեդալներ, արծաթէ վորք մեդալներ, բրոնզեայ մեդալներ և դոկտատական թերթեր: Գարդացական հաստատութիւններին մեդալների փոխարին արբւած են երեք կարգի դիպլոմներ. առաջին կարգինը համապատասխան է ոսկէ մեդալին, երկ-

րորդը՝ արծաթէ մեդալին, երրորդը բրոնզեայ մեդալին: Երբ պարգևների ցուցակը կարդացվեց, իշխան կառավարչապետը փակեց հանդիսը, շքանորհաւորելով պարզ և ստացած է կապետներին, և Կլարմենը որ ալ ըլլայ, պիտի հաղորդուի Հարցաքննութիւնները վերջանալէ յետոյ տեղի պիտի ունենայ հրատարակչին դատը, ուր պիտի դուրս վճարուի:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԵՐԶՐՈՒՄԻ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Կ. Պոլսի «Արեւել» լրագրի մէջ կարգաւոր շքանորհաւոր կեանքի մասին տպագրած յորուածին քաղցած ենք հետևեալ մի քանի տեղեկութիւնները. «Ի կարին որչափ բազմաան ուսումնարաններ, այնչափ էլ կ'աւելանան աշակերտներ: Այս րոպէին գրեթէ 2000 ուսանող ունի նա: Մայր վարժարան, Տէր-Սարգսեան, Մարտի, Սանատարեան, Աղապախեան զարոցները տարակուսելի է թէ պիտի բաւեն կարնեցոյ: Չը կարծեմ:

Միւսները մասին դրուածով կամ պարտաւոր կարգաւ աւելորդ համարելով, Մարտի վարժարաններն համառօտակի նկարագրել պիտի վործենք: Գէորդ Մարտի տեսնելով աղքատ մանուկներին անուս մնալը, զինց մի փառաւոր, կրկնաբար տուն իւր քակից, զարոցական կահկարասիներ, վերաշինելի տեղեր և այլն շինեց և դեռ կը շինէ ընծայելով ազգին Նորս մէջ դեռուողութեան երկու սեղանից գրեթէ 400 մանուկներ, որը ուսանում են պարտաճանաչ ուսուցչաց խնամքը:

Կարին այժմ ունի հինգ վարժարան, որոց երկուքը անկախ են և ունին յատուկ տնտեսներ, իսկ երեքը պիտի կառավարուին մի ընդհանուր տնտէսի իշխանութեամբ, բայց կարնոյ ազդ. վարժարանները անախանձելի վիճակի մէջ են այժմ: Տակաւին չէ շարունակուած դատարանութիւնը կանոնաւոր ուղղութեամբ, չէ կարողուած ներկայ ուսումնական տարեկանի ծրագրերը: Թէ ինչու, այդ պարզ է: Երկու հրատարակեան, նախորդ լինէ. Տեսուչը, հրատարակեաց պաշտօնից ղեկ վարժարանները չը բացուած: Հոգաբարձութիւնը ամէն ճիշ թափեց, այս ու այն կողմ նամակներ տեղացներով յաջորդ որոնց, չը կարողացաւ դանկ, սեպտեմբերի մէկն հասաւ, անպատճառ վարժարանները բանաւալ էր, բացեց տնտէսութիւնը յանձնելով մի երրորդ ու թիւն, որը այսօր հրատարակած է իւր ծանր պաշտօնից:

Ինչպէս է թէ միթէ կարնոյ մէջ չը կան այդ բարձր պաշտօնին յարմար անձինք: Կան, բայց փորձը զրուացնում է. կան, բայց նախանձի արդիւնքը չի զրոյցանում է, որովհետեւ նա մինչև իսկ զարոցների մէջ է գործում: Հոգաբարձութիւնը ի նկատ է առնում ոչ միայն տեսականը, այլ և ուսուցչական խնդիրը: Ստիպում է գործել, նորա անձնուրի անդամները յանձն են առնում բարոյական գոհողութիւններ, մանաւանդ Գէորդ Չիլինկիբեան՝ արժանաշխատակ Առաքել Բահաղիբեանի սանը իջնում է ասպարէզ և դասախօսում է ուսուցչաց, ուսուցչուհեաց հոգեբանութիւն և մանկավարժութիւն: Հենց առաջին օրը ներկայ էր գալիս, սահուն, պարզ և քաղցր ճով շարունակեց ճառը հինգ զգայարանայ վերայ: Նրա տարաբար ճառը շարունակեց իր խոսքը, ասանց վերուելու փիլիսոփայական ճառը շարունակում էր իւր մի հասարակ դաս, հակիրճ, համառօտ և ամփոփ տեսութիւններով: Գովել է դասախօս պտտնի մի ուղղութիւնը՝ հոգեբանութիւն և մանկավարժութիւն միասին խառն դասախօսելու: Կարնոյ լինէ, Տեսուչ խնդիրը կարևոր արդիւնք պիտի ունենայ, որովհետեւ թաղ. և Ուսումն. Հոգաբարձութեան միւս անդամները աշխատում են համոզել Չիլինկիբեանի ֆէլետիսին, որ յանձն առնէ լինէ, Տեսուչութեանը: Անշուշտ եթէ այս յառաջադրութիւն իրադրծուի, մեծ արդիւնք պիտի արտադրուի:

ՆԱՄԱԿ ԹԻՒՆԻՍՏԻՑ

Կ. Պոլսի, 4 նոյեմբերի Ազգաբարձութիւն մը, պաշտօնական կամ կէս պաշտօնական, հրատարակուած այս օրերս Պոլսի լրագրներում մէջ, կը ծանուցանէ թէ անհիմն են այն լուրերը, որը հրատարակած են Անգղիոյ լրագրներում մէջ ի մասին Մուսա պէյի դատին: Թուրքիոյ Արտաքին գործոց նախարարութիւնը յուզուած. Անգղիոյ լրագրներու հրատարակու-

թիւնները՝ ստոյգ տեղեկութիւններ կուզէ Կատարական գործոց նախարարութիւնէն և այն վերջինս ալ կը ծանուցանէ թէ՛ այդ դատ տակաւին վերջացած չէ, հարցաքննութիւններ կը շարունակուին, և Կլարմենը որ ալ ըլլայ, պիտի հաղորդուի Հարցաքննութիւնները վերջանալէ յետոյ տեղի պիտի ունենայ հրատարակչին դատը, ուր պիտի դուրս վճարուի:

Մենք արդէն բաւական զարմացած տեսնելով այն հեռագրները, որը հրատարակուեցան եւրօպական լրագրներում մէջ, և թարգմանուեցան «Մշակի» մէջ ալ: Այն ամէն խնդիրներ, որը ազգային գոյն ունին, անոնց մասին բնականաբար մենք աւելի ճիշտ և որոշ տեղեկութիւններ կըրանք ունենալ և զայն հաղորդելու փութալ, և երբ այդ տեսակ լուրեր չը հրատարակուեցան «Մշակի» մէջ, քնականաբար իրողութիւններ տեղի չունէին:

Մուսա պէյի դատի վերաբերմամբ կըսուի թէ ընդհանուր դատախազը (procureur général) դատարանաց է մի քանի վկայներու դէմ՝ ամբաստանելով զանոնք սուտ վկայութեան մեղադրանքը:

Մուսա պէյի ամբաստանելներում մէջ կայ նաև քերիչ Ալի անուսով ջորեպան մը, որ կողոպտուած է Մուսայէն, և այդ ջորեպան իւր ամբաստանութիւններում վկայներ ունի: Մակայն հարցաքննութիւններում միջոցին հարցաքննիչ դատաւորներ փոխուեցան, և ընդհանուր դատախազը բաղաւտելով դրուած հարցաքննութիւնները, գտեր է թէ իրարու հակասական բաներ կան և հետևաբար վկայները սուտ կը խօսեն. անտի անոնց դէմ դատաստան: Այս է մի քանի օրէ ի վեր տարածուած լուրն, որ եթէ ստոյգ ելլէ, հետևութիւնները յայտնի է թէ ինչ կ'ըլլայ:

Այստեղ կը խօսուի թէ Սասունի մէջ հանդարտութիւնը կատարեալ չէ, յուզումներ ըլլալու են, և կառավարութիւնը հարկադրուած է մի քանի թիւղանութներ ևս խրկել:

Լուրը ծանր է, բայց մինչև օր աստիճանի ըստոյգ է, մեղ անպայտ է: Այսպիսի լուրեր ոչ ճշ կարող է երաշխաւորել:

Մի քանի շաբաթներ առաջ գրած եմ թէ Մարտեան պատրիարք Բերայի մեր գերեզմանատունէն մասն և բաժին ուղղու յաւանութիւն ունի և թէ դատական գործոց նախարարութեան կողմէն այս իմաստով զիր կը խրկուած էր ի պատրիարքարան: Այժմ կը տեղեկանանք թէ՛ պետական խորհրդի մէջ նկատուողութեան առնելով այս պատասխանը, օրինաց համաձայն գտած են, և իրաւունքը հայոց պատրիարքին ըլլալու պիտի վճանէ:

Վերջապէս կարին իւր առաջնորդն ունեցաւ պատրիարքի փոխարեան իւրիշեան Գէորդ վարդապետ ընտրուեցաւ այդ պաշտօնին, կարին: Գաւառական ժողովի կողմէ:

Տ. Գէորդ վարդապետ իւրիշեան մի երիտասարդ է, յոյժ խոնական, լրջամտ, ազնիւ, գործունեայ ու ուղղամտ, և տարակոյս չունենք թէ վերին աստիճանի օգտակար պիտի ըլլայ կարնեցիներուն: Այս անգամ կարնեցիք յաջողեցան լաւ ընտրութիւն մը կատարել:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՌԵՐ

Կրեալի վրա եղած թիւրք զինուորները վերջին ժամանակներս սկսել են վախուստ տալ զորաբանակից իրերը դրուութիւնը այնքան ծանր է, որ թիւրքաց միևնաբերը անդադար ժողովներ են առնում:

Կ. Պոլսից գրում են, որ կառավարչական շրջաններում խօսք կայ Երբեք-Վաշային կրեալից յետ կանչելու: Անգղիական ղեկավարները և Երբեք-Վաշային պետք է Երբեք-Վաշային:

Հուսմից գրում են, որ այնտեղ օրից օր աւելի է սաստկանում այն կարծիքը, որ խալիսայն պէտք է յետ կանգնել երեքսեկեան զանակցութիւնից:

Անգլիական կառավարութեան կարգադրութեամբ շուտով նոր տեսակի լաւ հրացաններով պէտք է զինաւորվի Հնդկաստանի տեղական զորքը:

Պարիզից գրում են, որ վերջին օրերում ոստիկանութեան իխտ վարժուցքը զէպի բուլան-

ժեանները՝ ընդհանրապէս լաւ տպաւորութիւն չէ թողնում Այս և այն կուսակցութեան ձգտումներին աւելի բարձր է քաղաքացիներին ազատութիւնը չը խախտու սկզբունքը:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆՍԱՑԻՆ ԿՈՐՏԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԵՏԵՐՈՒԳ, 9 նոյեմբերի: Թագաւոր Կայսրը արտիլերիական օտնի ժամանակ բարեհաճեց տեղ հետևալը. «Պարտներ արտիլերիստներ. Ես բաղաւոր եմ, որ կարող եմ ողջունել այսօր մեզ բողոքի համար թանգաղին օրվայ 5000-ամակի առիթով և բաղաւոր եմ, որ այդ հազարից յօրեկանը լրանում է իմ թագաւորութեան օրերում: Սրտիս խորից շնորհակալ եմ բոլոր թէ ներկայ և թէ բացակայ, թէ այժմեան և թէ անցեալ արտիլերիստները, նրանց հաւատարիմ և արի զինուորական ծառայութեան համար, և հաւատարեցած եմ, որ մեր արտիլերիստ, ինչպէս և մեր ամբողջ զորաբանակը, կը փայլի պատերազմի դաշտում, ինչպէս և առաջ: Տէրը մի արագեց, որ այդ շուտով պատահի, թող ազատի մեզ Տէրը այդ ծանր փորձանքից, սակայն եթէ այդ կը պատահի, այն զէպքում Ես համոզված եմ, որ մեր քաջարի արտիլերիստ, ինչպէս և միւս տեսակի զինուորները, կը պաշտպանեն թանգաղին հայրենիքի պատիւը և փառքը: Եւր մեր արտիլերիստին»: Արտիլերիական օտնախմբութեան ժամանակ առանձին ուշադրութիւն էր գրաւուած զանգի միջին մասի զարգարանը. — պատի մօտ կանգնեցած էր Թագաւոր Կայսրի պատկերը, շրջապատած բոյսերով. նրա երկու կողմից դրած էին երկու բիւսա. ձախ կողմից Պետրոս I, իսկ աջ կողմից մեծ իշխան Գմիթի Գոնդուլովը: Պատկերներ առջև դրած էին զենքեր, իսկ դրանց մօտ կանգնեցած էին երկու ֆէլիքսիթիւր. — Թագաւոր Կայսրը ուշադրութիւն դարձրեց Մոսկաւի բորային ընկերութեան աշխատութիւնների վրա, և յայտնեց Մոսկաւի բորային ընկերութեանը Բարձրագոյն հաւանութիւն, ցանկութիւն յայտնելով, որ ընկերութիւնը ապագայումն էլ աջողութեամբ և եռանդով աշխատի յօրուս հայրենի առևտրի: — Թագաւորաց Զէտարիվը, Մեծ իշխան Վաղիմիր Ալեքսանդրովիչը, գնեց բաւաճիլիցեյի մէջստու օգնական Սօֆիան և զինուորական ու ֆինանսների մինիստրները նրանց անակամ են արտիլերիական ակադէմիայի պատուաւոր անդամներ: «С. Пет. Вѣд.» լրագրի վրա է, որ մինիստրների մասնաժողովը վերջնականապէս վճռել է կառավարչական վերահսկողութեան ենթարկել բոլոր երկրամասերի դրամական շրջանառութիւնները:

ՄՍՍԿՎԱ, 9 նոյեմբերի: Այսօր Մոսկաւի բորային յօրեկանի օրը, կատարվեց փառաւոր մաղթանք ֆինանսների մինիստրի, գնեցարւահանագապետի, փոխահանագապետի, քաղաքագլխի, բորային մասնաժողովի, և զանազան պատգամաւորների ներկայութեամբ: Մաղթանքից յետոյ տեղի ունեցաւ հանդիսաւոր նիստ, որի սկզբին ֆինանսների մինիստրը հաղորդեց, իր զեկուցման համաձայն, բորային ընկերութեան մասնաժողովին թագաւոր Կայսրի յայտնած Բարձրագոյն հաւանութեան մասին: Այդ տեղեկութեանը յաջորդեցին լուրերը և ապագային հիմնի նուազումը: Կրանից յետոյ կարգացվեցան բորային գոյութեան պատմական տեսութիւնը, ընդհանրական ուղեբանները և հեռագրները: Մոսկաւի առևտրական ընկերութեան պատգամաւորութիւնը յայտնեց, ի միջի այլոց, որ ընկերութիւնը վճռուել է յաւերածացնել այդ տեսակութիւնը: Ալեքսանդրեան առևտրական զարոցին կից Տեսնիական բաժին հիմնելով: Տնտեսութիւնը աւարտվեց նախաձեռնելով, որի ժամանակ գնեցարւահանագապետը առաջին աստղը առաջարկեց Թագաւոր Կայսրի կենացը, երկրորդ ֆինանսների մինիստրի, երրորդ զինուորահանագապետի կենացը: Ապա ֆինանսների մինիստրը բաժակ առաջարկեց ռուսաց արդիւնաբերութեան և առևտրի և դրա հետ կապված Մոսկաւի բորային ձագկման համար:

ՎԵՆԵՅԻԱ, 9 նոյեմբերի: Այստեղ ինկոյնիտօ ժամանեց Թագաւորաց Զէտարիվը:

ՄԻՒԱՊՎԱ, 9 նոյեմբերի: Նոյեմբերի 10-ին հասաւ Ստէնլի, Էմիլ-Ֆաշա և միւս միսիոնորները: Նրանց Բագաւոյո հասնելը սպասում է ոչ աւելի չուս քան յունվարի 1-ին:

ՊԵՏՐՈՒԲՈՒԳ, 10 նոյեմբերի Ռուսաց արտերկրային 500-ամսակի առիթով մեծ իշխան Միխայիլ Նիկոլայևիչը ստացա Քարձրագոյն հրովարտակ, որով յայտնում է Բագաւոր կայսրի խորին երախտագիտութիւնը՝ յրա երկարամեայ աշխատութիւններ համար՝ յոյժառ ուսաց արտերկրային բարգաւաճման երէկ Միխայիլեան մանեհում ներկայացան Բագաւոր կայսրին՝ յորեն լեանի առիթով եկած արտերկրային զինւորական շքաների ներկայացուցիչները։ Երէկ Պետրոպոլիսի ստորոցում տեղի ունեցաւ զանազան հինարկութիւնների կողմից պատգամաւորութիւնների ընդունելը։ Ընդունում էր Մեծ իշխան Միխայիլ Նիկոլայևիչը, որը հնորակալութիւն յայտնելով, յոյս յայտնեց որ արտերկրայինները կը արգարացնեն Միխայիլի յոյսերը։ 5 1/2 ժամին ազնւականների ժողովարանում տեղի ունեցաւ ընկերական ճաշ, որին ներկայ էին Մեծ իշխան Միխայիլ Նիկոլայևիչը և որդեգր հետ և Մեկընեւորդ-Մարիիցիլի զբաները։

ԹԷՀՐԱՆ, 10 նոյեմբերի Պարսկաստանում խօսքնան սաստկանում է, և տարածում է արեւելեան ուղղութիւնում։

ՊԵՏՐՈՒԲՈՒԳ, 10 նոյեմբերի Հրատարակված է համառուական կրկնապատկերի բնկերութեան կանոնադրութիւնը, որը ունի ակցիոններական 10 միլիոն գրամադրութիւն ընկերութեան հասարակական կարեւոր նշանակութիւն են տալիս։

ԽԱՐԱԳՈՎ, 10 նոյեմբերի Այսօր դէպի Խոնի ստատակի սովետիկ Տասկինի նախագահութեամբ բացված է հարաւային Ռուսաստանի հանքագործարանաւերերի 14-րդը ժողովը։

ՊԵՏՐՈՒԲՈՒԳ, 11 նոյեմբերի Երէկ Մեծ իշխան Միխայիլ Նիկոլայևիչի մօտ տեղի ունեցաւ նախաճաշիկ, որին ներկայ էին բոլոր արտերկրական զինեղանները և Պետերբուրգը եկած արտերկրական բոլոր ներկայացուցիչները։

ՍԱՍՏՐԿԱՆՆԻ, 11 նոյեմբերի Հոկտեմբերի 18-ից մինչև 22-ը տեղի ունեցած ցրտերի պատճառով փոքրեանների բամբակի բերքի երրորդ մասը թռչացաւ, իսկ սեպտեմբերի 18-ի ցրտի պատճառով բամբակի առաջին բաղը փչացաւ։

ՊԱՐԻՑ, 11 նոյեմբերի Սենատը հաստատեց 58 միլիոն ֆրանկի փոխառութիւնը, որով պէտք է նոր նաւեր կառուցվեն։

ԱԹԼԵՔ, 11 նոյեմբերի Այսօր այտեղից ուղեորից գերմանական այրի կայսրուհի Վիկտորիա դիւչիսի կործան, որտեղ պէտք է պատահէր աւստրիական կայսրուհու հետ, բայց վերջինս յանկարծակի կերպով հեռացաւ կղզուց։

Կ. ՊՈԼԻՍ, 11 նոյեմբերի Սուլթանը հրամայել է խիստ ընդունիւն նշանակել Հայաստանում թիւրքերի ձեռքով զործած բռնութիւնների վերաբերմամբ։

ՆՆՅԱ, 11 նոյեմբերի Երէկ օպերային թատրոնում ներկայ գտնված Մեծ իշխաններ Վլադիմիր Ալեքսանդրովիչ և Պետր Նիկոլայևիչ հասարակութեան կողմից ջերմ յոյսերի առարկայ դարձան։

ԲԵՐԼԻՆ, 11 նոյեմբերի Ստացված է տեղեկութիւն, որ Աֆրիկայում կործանվեց ոչ թէ Պետերի գերմանական, այլ անգլիական էկսպէդիցիան։

ԲՕՄԲԵ, 11 նոյեմբերի Միջին Հնդկաստանի լեռնաշղթայի կողմերի ցեղը ապստամբեց, քարու քանդ արեց առանձինը և սպանութիւններ կատարեց։ Ապստամբները պահանջում են առհասարակ հարկերի մեղմացնելը և կառավարութեան արվող հարկի ոչնչացնելը։

ՊԵՏՐՈՒԲՈՒԳ, 12 նոյեմբերի Ի նկատի ունենալով, որ Չերնոգորիայում սով է, ու սինոզը որոշեց, որ կարգադրութիւն ստանալուց յետոյ, կիրակի և տօն օրերը բոլոր եկեղեցիներում զանձանակ հաւարքի յօցուտ սովատանջ չերնոգորցիներին, և որ եկեղեցական սպասաւորները կարելի կզածին չափ օգնութիւն ցոյց տային զրանց նոյն իսկ եկեղեցական զոււարթները։

ՊԵՏՐՈՒԲՈՒԳ, 13 նոյեմբերի Թագաւանայ Ցեարեիլի երէկ արտասանմանից վերադարձաւ «Новое Время» հաղորդում է իբրև լուր, որ առաջիկայ տարւոյ սկզբներում քաղաքացիական մասի գլխաւոր կառավարի պաշտօնը կովկասում վերաջգում է և փոխարքայութիւնը վերականգնեցվում։

Ս. ՊԵՏՐՈՒԲՈՒԳԻ ԲՕՐԱՍ
Նոյեմբերի 10-ին

Լոյսիցի վրա 10 ֆունտ արծէ	93 ր . 75 >		
Բերլինի վրա 100 մարկ	45 > 90 >		
Փարիզի վրա 100 ֆրանկ	37 > 15 >		
Ռուսի	7 > 61 >		
Մաքսային կուպոններ	151 > 25 >		
Արծաթ	1 > 10 >		
Բորսային դիվիդենդներ	6 > 70 >		
Պետական 5% սոմա 1-ին շրջանի	99 > 12 >		
— — — — — 2-րդ	98 > 75 >		
— — — — — 3-րդ	98 > 75 >		
— — — — — 4-րդ	98 > 75 >		
— — — — — 5-րդ	98 > 75 >		
— — — — — 6-րդ	98 > 75 >		
Նոր 4%	84 > — >		
Արեւելեան 5% փոխառութիւն 1-ին շրջ	99 > 12 >		
— — — — — 2-րդ	98 > 75 >		
— — — — — 3-րդ	99 > — >		
Ներքին 5% առաջին փոխառութիւն	245 > 50 >		
— — — — — երկրորդ	224 > 75 >		
5 1/2% ընդամենը	101 > 87 >		
Ռուսիայի ընդամենը	171 > 50 >		
Եւրոպայի կոնսուլից փոխառ.	141 > — >		
Նոր երկաթուղային ընդամենը	98 > 87 >		
5% գրաւակա՞ն թղթեր կալուած			
փոխ. կրեդ. ընկ. մետ.	147 > 25 >		
— — — — — թղթային	91 > 62 >		
Գրաւ. թղ. Ազն. բանկի	98 > — >		
Գիւղական բանկի	102 > — >		
6% գրաւ. թղ. Թիֆլիսի—27 & 43տ.	97 > — >		
— — — — — Բուխարայի—18 & 43տ.	97 > 50 >		
Ս. Պետերբուրգի քաղաքային օրվա- զացիաներ	93 > 87 >		
Սուկկայի քաղաք. օրվազացիաներ	93 > 50 >		
Յոյսիցի	93 > 37 >		
Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օրվ.	84 > 25 >		
Ս. Պետերբուրգի բորսայի տրամադրութիւնը զանդաղ է			

Իմբարդի-հրատարակող Գրիգոր ԱՐՄԵՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Լյոս տեսաւ Յ. Իւուֆեանի հրատարակութեամբ առանձին գրքովի
ԵՆԻՉԵՐԻ
(Թիւրքահայերի կեանքից)
Գրեց Վ. Փափագեանց
(Արտատպած «Մշակ» լրագրից)
Գինն է 5 կոպէկ:



ՄԱՏԿԱՄ ԵՆ
ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱԳԱԶԻՆՈՒՄ
(ԹԱՄԱՄՇԵՎԻ ԳԱՐՎԱՆԱՐԱՅՈՒՄ)

Անգլիական մահճակալներ, թամբեր, ամաններ, կարպետներ, սպօն, գրչահատներ, մկրտաներ, ածխիկներ, մատուցարաններ, պատրոններ, զիլզաներ (3 ր. հարկերը), կլենիկա, արտաքնոցներ համար թուղթ, զլիկ և շորերի վրձիներ, բիսկիտներ, թէյ, թէյամաններ, զրիչներ, մագրի վերանորոգիչ Մակ-Մաստեր և այլն։

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.
ՅՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱԳՆԱՅՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱՎԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ, մտնելով Կ. ՊՈԼԻՍ, ՍԱՄՍՆՆ և ՏՐԱՊԻՉՈՒՆԻ
Երթևեկութիւնը շոգենաւերի 1889 թ. վերջին քառօրի համար փոխված է, սկսած հոկտեմբերի 11-ից, այդ փոփոխութիւնը վերաբերվում է Բաթումից շոգենաւի դուրս գալուն, որը նշանակված է շորքաւթի օրերը, երկու շաբաթ մի անգամ, փոխանակ հինգշաբթի օրերը։

ԲԱԹՈՒՄԻՑ ԴՈՒՐՄ ԿԸ ԳԱՆ

11 Հոկտեմբերի շոգենաւ	«ՄԵՆՏԻՆԻՍ»
25	«ԱՐՄԵՆԻԱ»
8 Նոյեմբերի	«ԱՆԱՏՈՒՄ»
22	«ՄԵՆՏԻՆԻՍ»
6 Դեկտեմբերի	«ԱՐՄԵՆԻԱ»
20	«ԱՆԱՏՈՒՄ»

Տեղեկութիւնների համար ծանուցարկերը և բեռների մասին պէտք է դիմել ընկերութեան աղէնաներին.
Թիֆլիսում, պ. ԲԸՆՈՒՆ, նախկ. Արմրուտ գալերէայում, № 14.
Բաթումում, պ. ԳԱՐԱՆԻՈՒՆ, Նաբերէժնայում։

ՄԻ Հայ ԵՐԻՏԱՍԱՐԴ, որը արտասահմանեան մի դպրոցում ուսում առած է, որը հմուտ է անգլիերէն, ֆրանսերէն, հայերէն և թիւրքերէն լեզուների, ցանկանում է թիֆլիսիում կամ յիշեալ լեզուների մասնաւոր տներում դասատու լինել, կամ որ և է առևտրական հիմնարկութիւններում հաշւապահութեան և օտար լեզուների զրադրութեան պաշտօն վարել.
Հասցէի համար դիմել կամ «Մշակ» խմբագրութեանը, կամ պ. Ալեքսանդր Ստեփանեանցին, Զուլալովի քարվանսարայում։

ՀԱՉՈՒԵԿՉԻԹ

Թ Ի Ֆ Լ Ի Ս Ի Ա Ռ Ե Ի Տ Ր Ա Կ Ա Ն Բ Ա Ն Կ Ի
ց 1-ն Նոյեմբերի 1889

Պ Ա Հ Ա Ն Զ Բ	Թիֆլիսում	Բագուի բաժն.	Ընդամենը	Պ Ա Ր Տ Բ	Թիֆլիսում	Բագուի բաժն.	Ընդամենը
1. Գրամարկ (առձեռն թղթադրամ)	63,680—38	47,985—71	111,666—09	1. Հինական դրամադրու	1,000,000 —	—	1,000,000 —
2. Ընթացիկ հաշիւ Պետական Բանկի բաժնում	65,174—06	140,000 —	205,174—06	2. Պանական դրամադրու	165,571—28	—	165,571—28
3. Զեղջուռնի (Disconto) մուրհակաց երկու ստորագրութեամբ	2,612,390—70	797,217—92	3,409,608—68	3. Գրամական աւանդներ՝			
4. Զեղջուռնի մուրհակաց մէկ ստորագրութեամբ, ապահոված արքայադրուով	—	—	—	ա) Պայմանաւածամով	1,774,280 —	119,697 —	1,893,977 —
5. Զեղջուռնի ստորագրեր թղթ, կարծն. և այլն	20,651—25	5,956—31	26,607—56	բ) ց'Պանանջ	223,130 —	31,560 —	254,690 —
6. Փոխառութիւնը դրամականով՝				գ) Ընթացիկ հաշուով հասարակ	705,830—53	799,226—75	1,505,057—28
ա) Պետութիւնից սպա՞ն. տոկոսաբ. թղթերի	1,022,864—81	316,808 —	1,339,672—81	—	—	298,418—50	298,418—50
բ) — — — — — ոչ սպան	252,613 —	9,105 —	261,718 —	4. Զեղջուռնի մուրհակաց պետական բանկայի թիֆլիսի բաժնում	187,182—64	—	187,182—64
գ) ապրանքների	800 —	16,120 —	16,920 —	5. Մասնաւոր ընթացիկ հաշիւ պետական բանկայի թիֆլիսի բաժնում, ապահոված մուրհակներով և ստորագրեր թղթերով	—	—	—
դ) Ռուսոյ և արծաթի	—	500 —	500 —	6. Թղթակցիցներ՝			
7. Բանկի պատանեայ տոկոսաբեր թղթեր	322,488—75	55,242—29	377,722—04	ա) Նոյս հաշիւը (Loro)	6,090,749—16	—	6,090,749—16
8. Ռուսի և արտասահմանի փոխանակադրեր	75,876—38	—	75,876—38	բ) Բանկայի հաշիւը (Nostro)	7,224,520—56	—	7,224,520—56
9. Թղթակցիցներ՝				կենտրոն. վարչութիւն. հաշիւը բաժնի հետ	152,688—65	—	152,688—65
ա) Նոյս հաշիւը (Loro)	6,230,792—87	—	6,230,792—87	8. Բանկայի բաժնետոմսերու անվճար կործանների բաշիւը 82, 83, 84, 85, 86, 87, 88 թթ	3,478—81	—	3,478—81
բ) Բանկայի հաշիւը (Nostro)	7,008,043—32	—	7,008,043—32	9. Զը վճարուած տոկոսներ, աւանդներ, ընթացիկ հաշիւներ և այլ զործողութեանց	67,246—86	20,642—55	87,889—41
10. Կենտրոն. վարչութեան հաշիւը բաժնի հետ	75,645—10	—	75,645—10	10. Ստացուած տոկոսներ և յանձնարարականներ	216,663—30	99,255—42	315,918—72
11. Բողոքուած մուրհակներ	21,486—41	—	21,486—41	11. Փոխանցիկ զոււարթներ	19,781—97	10,184—64	29,966—61
12. Պայմանաւածամբ անցուցուած փոխառութիւններ	7,180 —	3,200 —	10,380 —	12. Արդիւնք	—	—	—
13. Ընթացիկ ծախսեր	36,666—44	12,349—04	49,015—48				
14. Կանկարատի և սկրիպանայի ծախսեր	3,215—36	2,520—39	5,735—75				
15. Յետ ստացուելիք ծախսեր	11,563—87	1,239—53	12,803—40				
Բ Ա	17,831,123—76	1,556,074—56	19,387,198—32	Բ Ա	17,831,123—76	1,556,074—56	19,387,198—32